

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ  
ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ՆԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ**

(31 մարտի 2002 թ. )

«Եւ ուր երթամն՝ գիպիցէք, եւ զճանապարհն գիպիցէք:  
... Ես եմ ճանապարհն եւ ճշմարտութիւն եւ կեանք»:  
(Յովհ. ԺՂ 4-6)

«Եվ թե ուր եմ գնում, այդ գիպեք, գիպեք և ճանապարհը:  
... Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը»:  
(Նովհ. ԺՂ 4-6)

*Միրելի ժողովուրդ հայոց.*

Նարության ողջունարեր առավուր է: «Երկիրը լցվել է Տիրոջ ողորմությանը» (Մաղմ. ԾԺԸ 64): Նարության ու կյանքի հաղթության հավատով, հույսով ու լավատեսությամբ են համակված մեր հոգիները՝ հաղորդ «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը» (Նովհ. ԺՂ 4-6) Բանին Կենաց Աստվածհայրության խոսքին:

Քրիստոսի սքանչելագործ Նարության խորհրդով մենք ապրում ենք այն մխիթարությունը, որ Աստված չթողեց իր արարածներին մեղքի հեղ միայնակ, կորստյան ճանապարհին, այլ շարունակ հայրենվեց մարդկությանը ևսահապեղների և մարգարեների միջոցով, իսկ ի լրումն ժամանակի մարմին առավ ու բնակվեց մարդկանց մեջ:

Մեն այլ աշխարհի՝ խաղաղ ու եղբայրասեր, Աստծո հեղ հաշր՝ փրկված աշխարհի սերը մարդկանց հոգիներում սերմանելու առաքելությամբ եկավ Քրիստոս, եկավ իսաչ վրա անարար Իր արյան հեղմամբ մեղքն ու մահը խորտակելու հանձնառությամբ: «Միրեց յուրայիններին, ... իսպառ սիրեց ևրանց» (Նովհ. ԺԳ 1), - ասում է առաքյալը: Փրկչի իսպառ այդ սիրով գծվել է Գողգոթայի խաչելության ուղին և փայլարակել Նարության Լույսը՝ իբրև սիրո ու բարո հաղթության ճշմարտություն, իբրև քավություն ու ներում, իբրև հաշրություն:

Այսօր մենք, ում կույնպես խապառ սիրեց Քրիստոս, կանգնած ենք թափուր գերեզմանի առջև, որի դռնից քարը մեզ համար մի կողմ է գլորված: Գերեզմանից անդին մահվան սրվերից գերծ ճանապարհն է, և Նարուցյալ Քրիստոս ձայնում է մեզ. «Եվ թե ուր եմ գնում, այդ գիրեք, գիրեք և ճանապարհը: ... Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը» (Մովհ. ԺԴ 4-6):

Միրելի բարեպաշտ հավատացյալներ.

Աստուծո Միածին Որդու փրկագործական առաքելությանը շնորհիև ունենք ճշմարտությունը ճանաչելու, գրկելու կյանքի իմաստը ու նպատակը, երջանկության ճանապարհը: Ըշմարտությունը և կյանքը մեր հոգիներից պիտի բխեն, Քրիստոսին սիրող հոգիներից, որ հավատում են Նրա Խոսքին՝ Սուրբ Ավետարանին, վարսահում Նրա Նարությանը ու Նրա աստվածային ներկայությանը մեր մեջ, կյանքի հավիտենությանը, քրիստոնեական բարոյական արժեքների կենսահասարար ուժին: Մեր ամեն խոսք և գործ կա՛ն վաճառում է ճշմարտությունը, կա՛ն հասարարում այն: Կա՛ն խոցում է դիմացիկ սիրտը, կա՛ն ամոքում ու մխիթարում, կա՛ն ավերում է, կա՛ն կառուցում, կա՛ն իսպար է ծնում, կա՛ն լույս: Չլինենք ճշմարտության վաճառողներ այն զինվորների պես, որ կաշառվեցին ու սուր վկայություն րվեցին, թե աշակերտներն են րարել Նրաուսի մարմինը, այլ անկաշառ հոգով, արդար սրտիվ և Նարության անխառն հավատով մեր Եկեղեցու խորաններում հաղորդվենք Աստուծո Միածին Որդու կենդանարար մարմնին ու արյանը: Ով ճանաչել է Ըշմարտությունը, իսպարը չի ցանկա: Ով քայլել է ճշմարտության ճանապարհով, իսպարում չի դեգերի: Մեր ճանապարհը Նայոց Մի, Առաքելական Սուրբ Եկեղեցին է՝ Նարուցյալ Քրիստոս քարոզող, Նարության հավարի մեջ, Նարության ճանապարհին մեզ հասարարող ու ասրեցնող:

Միրելի ժողովուրդ հայոց, Նարության կոր արշարույս է բացված ի Նայասարան, Արցախ և ի Միյուոս՝ ներշնչուն կոր կյանքի ապաստանով՝ առաքիևությանը շնեշող, ապահով, բարօր ու երջանիկ կյանքի: Երբ Նարության կոր առավուր է հայ իրականության մեջ, չերկնեցենք մեր Նայրենիքում իրավունք և օրինականություն պաշարպանելու, արդարություն և ճշմարտություն հասարարելու: Դառնանք դեպի Նարության անարվեր լույսը, բացենք մեր հոգին մեզ կորոզող ու փրկող Նարուցյալ Քրիստոսի առջև: Երբ Նարության կոր առավուր է, ինչպե՛ս լույսանք անցնենք կեղծիքի կողքով և մեր անարարերությանը ու անփութությանը թույլ րանք, որ մեր կյանքը դառնա կեղծ արժեքների ու գաղափարների, անօրեն գործարքների վաճառարեղի:

Քրիստոնեական բարոյականի վերածնունդը այսօր համազգային ինկլիթ է և յուրաքանչյուրիս մտածողության առարկա, քանզի առանց սիրո, առանց ազնվության, արդարամտության ու օրինավորության միայն կարճատև կարող են լինել բոլոր ձեռքբերումներն ու հաջողությունները, անարժեքությունը՝ գուրկ ազատ ու ներդաշնակ զարգացումից, գիտությունը՝ հեռու կյանքի առաջընթացին ծառայելու իր կոչումից, արվեստը՝ անհոգի ու միայն նմանակող: Առանց Փրկչի ոչինչ հարարել ու երջանկաբեր չենք կարող արեղծել: Քրիստոս է ճանապարհը, «աղբյուր կենաց և բաշխող շնորհաց»:  
«...ով Ինձ հավատում է, ինքն էլ կանի այն գործերը, որ Ես եմ անում» (Նովի. ԺԴ 12),- ասում է Տերը: Լավը լավ կոչող, վայրը՝ վայր, բարին չարից տարբերող գործերն են դրանք, տեսիլքով ներշնչուն արության գործերը, հաղթանակող, հրաշածին, անհնարինը հնարավոր դարձնող ու հարությանը շնչող գործերը:

Փրկչի ուղենշած, Նրա արյամբ հարթված, Նրա սիրով ծաղկուն հարության ճանապարհով պիտի վերածնվի հայաստանը, ճշմարտությանը պիտի գորեղ լինի, լեցուն կյանքով ու երջանկությանը, երկիր դրախտավայր՝ աշխարհաապիտոռ ողջ հայության համար ոչ միայն պարմական հայրենիք, այլ րուն հայրական, որ հավաքում է մեզ տապանակիր Արարարի շուրջ, Միածնակառույց Սուրբ Էջմիածնի հովանու ներքո:

Աշխարհի բոլոր կողմերում հարության հավատով արձագանքենք «հայաստանի - Սիյուռ» միաբանության կողմից հրավերին և Տիրոջով ուրախ, Տիրոջով վստահ ու քաջեղուն՝ ձեռնամուխ լինենք հայոց անկախ պետականության՝ մեր կողմ կյանքի կառուցմանը: Նոր լույսեր վառենք ազգային միության մեր Սուրբ Տաճարում, վարահենք մեր գործությանը Քրիստոսով, սիրենք մեր միաբանությունը՝ ամբողջ, պայծառ պահելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, ուր բնակվում է Աստված Իր օրհնությանը, հարություն ճառագող Իր ճշմարիտ գործությանը, որը զարթոնքով է լցրել հայ կյանքի անդամաստաններն ամենուր՝ կողմ կենսավիշ հաղորդելով կյանքի հաղթության հավատով ապրող ու արարող Ազատ Արցախին և հայոց Սիյուռին:

Ապրենք Քրիստոսով, և մեր կյանքը միշտ կլինի հարության ողջունաբեր առավոտ:

Ամենայն հայոց Միածնաէջ Մայր Աթոռից «յարեալ Քրիստոս» մեծաքանակ ավերիսն ենք հղում և կղբայրական Մեր ջերմ ողջույնը բերում Առաքելական մեր Եկեղեցու Նվիրապետության Աթոռների շնորհագարդ գահակալներին՝ Մեծի Տանն Կիլիկիոն Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Կաթողիկոսին, Երուսաղեմի հայոց Ամենապատիվ Պար-

րիաբք *S. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին*, Կոստանդնուպոլսո Նայոց Անենապարիվ Պատրիարք *S. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանին*:

Տարության բարի ավերիսով Նայրապետական Մեր օրհնությունըն եկք բերում ուխտապահ ու նվիրյալ ողջ հոգևոր դասին և հավատավոր համայն մեր ժողովրդին ի Նայաստան, Արցախ և ի Սփյուռք:

Տարության օրհներգությունը Մեր շուրթերին, ողջունում եկք հայոց պետական ավագանուն՝ գլխավորությամբ Մ Նախագահ Տիար Ռոբերտ Զոհարյանի, և Նայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներին ու ներկայացուցիչներին:

Ի Զրիստոս սիրո եղբայրական Մեր ողջույնն եկք հղում քույր Եկեղեցիների հոգևոր պետերին և Նարուցյալ Փրկչի առաքաբաշխ շնորհները հայցում Զրիստոսի հավատավոր հոտին, համայն աշխարհին: Զրիստոս հարյալ: Զրիստոսով հարուցյալ ու ևորոզ են մարդն ու տիեզերքը: Չկա մահ՝ «Նա ամեն ինչ հաստատել է լինելու համար, և աշխարհի գործերը փրկության համար են» (Իմաստ. Սող. Ա 14):

Զրիստոսի Տարությամբ բացվել է կյանքի ճանապարհը: Մերն է ընտրությունը ևոր այգաբացին մարդկության երրորդ հազարամյակի և հայոց ևորանկախ պետականության. «Եվ թե ուր են գնում, այդ գիտեք, գիտեք և ճանապարհը...»:

«Զրիստոս յարեալ ի մեռելոց,  
Մեզ, ձեզ մեծ ակերիս»:

Ս. Էջմիածին,  
31 մարտի 2002 թ.